

<b>Համարը</b>	<b>Տեսակը</b> Հիմնական
<b>Տիպը</b> Կոնվենցիա	<b>Կարգավիճակը</b> Գործում է
<b>Սկզբնաղբյուրը</b> ՀՀԱԳՆՊՏ 2016.07.13/1(35)	<b>Ընդունման վայրը</b> Մոսկվա
<b>Ընդունող մարմինը</b> Հայաստանի Հանրապետություն	<b>Ընդունման ամսաթիվը</b> 28.10.2011
<b>Ստորագրող մարմինը</b>	<b>Ստորագրման ամսաթիվը</b> 28.10.2011
<b>Վավերացնող մարմինը</b>	<b>Վավերացման ամսաթիվը</b>
<b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 01.06.2016	<b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՄԱՆԱՏԻՊ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Ե Վ Ր Ո Պ Ա Յ Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի  
Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՄԱՆԱՏԻՊ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

**ՄՈՍԿՎԱ, 28-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011 ԹՎԱԿԱՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ն**

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիան ստորագրած մյուս Կողմերը,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև առավել մեծ միասնության,

նշելով, որ բժշկական նշանակության արտադրանքի կեղծումը և նմանատիպ հանցագործությունները իրենց բնույթով լրջորեն վտանգում են հանրային առողջությունը,

վկայակոչելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովի ընթացքում ընդունված Գործողությունների ծրագիրը (Վարշավա, 2005 թվականի մայիսի 16-17), որը առաջարկում է մշակել Եվրոպայի քաղաքացիների անվտանգությունն ամրապնդող միջոցներ,

հաշվի առնելով 1948 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հռչակված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (1950, ԵՊՇ հմ. 5), Եվրոպական սոցիալական խարտիան (1961, ԵՊՇ հմ. 35), «Եվրոպական դեղագրքի մշակման մասին» կոնվենցիան (1964, ԵՊՇ հմ. 50) և դրա արձանագրությունը (1989, ԵՊՇ հմ. 134), «Դեղերի և կենսաբանական հավելումների կիրառման մասով մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիան՝ Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիան (1997, ԵՊՇ հմ. 164) և դրա լրացուցիչ արձանագրությունները (1998, ԵՊՇ հմ. 168, 2002, ԵՊՇ հմ. 186, 2005, ԵՊՇ հմ. 195, 2008, ԵՊՇ հմ. 203), «Կիրեռիանցագործությունների մասին» կոնվենցիան (2001, ԵՊՇ հմ. 185),

հաշվի առնելով նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան այլ աշխատանքները, մասնավորապես՝ Նախարարների կոմիտեի որոշումները և Խորհրդարանական վեհաժողովի աշխատանքը՝ հատկապես առողջության անվտանգության շրջանակներում դեղագործների դերին վերաբերող AP(2001) որոշումը, Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականի ապրիլի 6-ին և 2007 թվականի ապրիլի 26-ին ընդունված՝ Խորհրդարանական վեհաժողովի 1673 (2004) «Կեղծիքներ. խնդիրներ և լուծումներ», 1794 (2007) «Եվրոպայում դեղանյութերի որակը» որոշումների պատասխանները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող համապատասխան ծրագրերը,

պատշաճ կերպով հաշվի առնելով նաև այլ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը և ծրագրերը՝ իրականացվող հատկապես Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից, մասնավորապես՝ ԱՀԿ Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման դեմ միջազգային աշխատանքային խմբի (IMPACT) աշխատանքը, Եվրոպական միության կողմից, ինչպես նաև Մեծ ութնյակի համաժողովի ընթացքում տարվող աշխատանքը,

որոշելով արդյունավետորեն նպաստել բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջությանն սպառնացող այլ նմանատիպ հանցագործությունների դեմ պայքարի համընդհանուր խնդրի լուծմանը՝ մասնավորապես նախատեսելով այդ հանցագործություններին առնչվող՝ հանցագործության նոր տեսակներ և քրեաիրավական պատիժներ,

համարելով, որ սույն Կոնվենցիայի նպատակը հանրային առողջության սպառնալիքների կանխարգելումն ու դրանց դեմ պայքարն է, նյութական քրեական իրավունքին վերաբերող Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով դրա նպատակը և համաչափության սկզբունքը,

գիտակցելով, որ սույն Կոնվենցիան նպատակ չունի լուծելու մտավոր սեփականության ոլորտում առաջացած խնդիրները,

հաշվի առնելով միջազգային համընդհանուր մի գործիք մշակելու անհրաժեշտությունը, որը կենտրոնացված կլինի տուժողների իրավունքների պաշտպանության, կանխարգելման և քրեական իրավունքի բնագավառում բժշկական նշանակության արտադրանքի ցանկացած տեսակի կեղծման և հանրային առողջության համար սպառնալիք ներկայացնող նմանատիպ այլ հանցագործությունների դեմ պայքարի հայեցակետերին, և որը կստեղծի Կոնվենցիայի իրականացմանը հետևելու որոշակի մեխանիզմ,

գիտակցելով նաև, որ բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և նմանատիպ այլ հանցագործությունների համաշխարհային սպառնալիքի դեմ արդյունավետ կերպով պայքարելու համար խրախուսվում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և անդամ չհանդիսացող պետությունների միջև միջազգային սերտ համագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

**Մաս I. Առարկան և նպատակը, խտրականության բացառման սկզբունքը, գործողության ոլորտը, սահմանումները**

### **Հոդված 1. Առարկան և նպատակը**

1. Սույն Կոնվենցիայի նպատակը հանրային առողջության սպառնալիքների կանխարգելումն ու դրանց դեմ պայքարն է՝ հետևյալ միջոցներով.

- ա. որոշակի արարքների քրեականացմամբ,
- բ. սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործություններից տուժողների իրավունքները պաշտպանելով,
- գ. խթանելով ազգային և միջազգային համագործակցությունը:

2. Կողմերի կողմից Կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով սույն Կոնվենցիան նախատեսում է դրա իրականացմանը հետևելու յուրահատուկ մեխանիզմ:

## **Հոդված 2. Խտրականության բացառման սկզբունքը**

Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կիրարկումը, մասնավորապես՝ տուժողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջոցների օգտագործման հնարավորությունը, պետք է լինի ապահովված՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես, օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելությունը, սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը, հաշմանդամությունը կամ այլ կարգավիճակը:

## **Հոդված 3. Գործողության ոլորտը**

Սույն Կոնվենցիան վերաբերում է բժշկական նշանակության արտադրանքին՝ անկախ մտավոր սեփականության իրավունքով պաշտպանված լինելու հանգամանքից և անկախ այն հանգամանքից՝ դրանք հանդիսանում են գեներիկ դեղամիջոցներ են, թե ոչ, ներառյալ՝ բժշկական սարքավորումների հետ օգտագործվող լրացուցիչ պարագաներին, ինչպես նաև կենսաբանական ակտիվությամբ օժտված նյութերին, օժանդակ նյութերին, բժշկական արտադրանքի արտադրության ընթացքում օգտագործման համար նախատեսված նյութերին ու տարրերին:

## **Հոդված 4. Սահմանումները**

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

- ա. «բժշկական նշանակության արտադրանք» նշանակում է՝ բժշկական նշանակության արտադրանք և բժշկական սարքավորումներ.
- բ. «դեղագործական արտադրանք (դեղ)» նշանակում է՝ մարդու և կենդանու օգտագործման համար նախատեսված դեղեր, որոնք կարող են լինել.
  - i. ցանկացած նյութ կամ նյութերի համակցություն, որն ունի մարդու կամ կենդանու հիվանդությունների բուժման կամ կանխարգելման հատկություններ,
  - ii. ցանկացած նյութ կամ նյութերի համակցություն, որը կարող է օգտագործվել մարդու կամ կենդանու կողմից, կամ որը, ունենալով դեղաբանական, իմունաբանական, մետաբոլիկ գործառույթներ, կարող է կիրառվել վերջիններիս նկատմամբ՝ վերջիններիս ֆիզիոլոգիական գործառույթները վերականգնելու, ուղղելու, փոփոխելու կամ բժշկական ավտորոշում իրականացնելու նպատակով,
  - iii. ուսումնասիրությունների նպատակով կիրառվող դեղագործական արտադրանք.
- գ. «ակտիվ նյութ» նշանակում է՝ ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է դեղագործական արտադրանքի արտադրության մեջ օգտագործվելու համար, և որը դեղագործական արտադրանքի արտադրության մեջ օգտագործվելու դեպքում դառնում է վերջինիս ակտիվ բաղադրամաս.
- դ. «օժանդակ նյութ» նշանակում է՝ ցանկացած նյութ, որը չի համարվում ակտիվ նյութ կամ պատրաստի դեղագործական արտադրանք, սակայն մարդու և կենդանու օգտագործման

համար նախատեսված պատրաստի դեղագործական արտադրանքի բաղկացուցիչ մաս է և կարևոր է պատրաստի դեղագործական արտադրանքի ամբողջականության ապահովման տեսանկյունից.

ե. «բժշկական սարքավորում» նշանակում է՝ ցանկացած գործիք, սարք, սարքավորում, ծրագրակազմ, նյութ կամ այլ միջոց, որը կարող է օգտագործվել առանձին կամ համակցության մեջ՝ ներառյալ այն ծրագրակազմը, որը դրա արտադրողների կողմից նախատեսված է հատկապես ախտորոշման և (կամ) թերապևտիկ նպատակներով, և որը անհրաժեշտ է այն դրա պատշաճ կիրառման համար, որ արտադրողները նախատեսել են մարդու կողմից հետևյալ նպատակներով օգտագործելու համար.

- i. հիվանդությունների ախտորոշում, կանխարգելում, դիտանցում, բուժում կամ մեղմացում,
- ii. մարմնական կամ այլ վնասվածքի ախտորոշում, դիտանցում, բուժում, մեղմացում կամ դրա դիմաց փոխհատուցում,
- iii. ֆիզիոլոգիական կամ անատոմիական գործընթացի փոփոխություն, փոխարինում կամ ուսումնասիրություն,
- iv. հղիության ընթացքի հսկում,

և որը չի հասնում մարդու մարմնի վրա կամ մարմնում իրականացվող իր հիմնական ենթադրվող ազդեցությանը դեղաբանական, իմունաբանական, մետաբոլիկ միջոցներով, բայց որի գործառնությունների իրականացմանը կարող են նպաստել նշված միջոցները.

զ. «լրացուցիչ պարագա» նշանակում է՝ ցանկացած իր, որը չի հանդիսանում բժշկական սարք, սակայն իր արտադրողի կողմից հատուկ նախատեսված է բժշկական սարքավորման հետ համատեղ օգտագործման համար, որպեսզի հնարավորություն ընձեռի բժշկական սարքավորմանը օգտագործվել իր արտադրողի նախատեսած նպատակով.

է. «մասեր» և «նյութեր» նշանակում է՝ բոլոր այն մասերը և նյութերը, որոնք պատրաստվում կամ նախագծվում են բժշկական սարքավորումների համար, և որոնք կարևոր են բժշկական սարքավորումների ամբողջականությունն ապահովելու տեսանկյունից.

ը. «փաստաթուղթ» նշանակում է՝ բժշկական նշանակության արտադրանքին, ակտիվ նյութին, օժանդակ նյութին, նրա մասին, նյութին կամ լրացուցիչ պարագային առնչվող ցանկացած փաստաթուղթ՝ ներառյալ փաթեթավորումը, պիտակավորումը, օգտագործման ձեռնարկը, ծագման սերտիֆիկատը կամ բժշկական արտադրանքին և թվարկված մյուս նյութերին ուղեկցող ցանկացած այլ սերտիֆիկատ կամ դրանց արտադրության և (կամ) բաշխման հետ ցանկացած այլ ձևով անմիջականորեն փոխկապակցված փաստաթուղթ.

թ. «արտադրություն» նշանակում է.

i. դեղագործական արտադրանքի դեպքում՝ դեղագործական արտադրանքի, ակտիվ նյութի կամ դրա օժանդակ նյութի արտադրության գործընթացի ցանկացած փուլ կամ դեղագործական արտադրանքը, ակտիվ նյութը կամ դրա օժանդակ նյութը վերջնական տեսքի բերելու գործընթաց,

ii. բժշկական սարքավորման դեպքում՝ բժշկական սարքավորման, դրա մասերի կամ նյութերի արտադրության գործընթացի ցանկացած փուլ՝ ներառյալ սարքավորման, դրա մասերի կամ նյութերի նախագծման, ինչպես նաև սարքավորումը, դրա մասերը կամ նյութերը վերջնական տեսքի բերելու գործընթացը,

iii. լրացուցիչ պարագայի դեպքում՝ լրացուցիչ պարագայի արտադրության գործընթացի ցանկացած փուլ՝ ներառյալ լրացուցիչ պարագայի ծրագրման, ինչպես նաև այն վերջնական տեսքի բերելու գործընթացը.

ժ. «կեղծիք» նշանակում է՝ սկզբնաղբյուրի և (կամ) իսկության կեղծ ներկայացում.

ժա. «տուժող» նշանակում է՝ ցանկացած ֆիզիկական անձ, որը ֆիզիկական կամ հոգեբանական վնաս է կրում կեղծված կամ առանց համապատասխան թույլտվության կամ սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված համապատասխանության պահանջները

չբավարարող եղանակով արտադրված, շուկայահանված և բաշխված բժշկական նշանակության արտադրանքի օգտագործման հետևանքով:

## **Մաս II. Նյութական քրեական իրավունքը**

### **Հոդված 5. Կեղծիքների արտադրությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իր ներպետական օրենսդրությամբ որպես հանցագործություն նախատեսելու բժշկական նշանակության արտադրանքի, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների կանխամտածված կեղծումը:

2. Ինչ վերաբերում է դեղագործական արտադրանքին և, նպատակահարմարության դեպքում, բժշկական սարքավորումներին, ակտիվ նյութերին և օժանդակ նյութերին, ապա 1-ին պարբերությունը կիրառվում է նաև դրանց անցանկալի խառնուրդների նկատմամբ:

3. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական միությունը կարող է սույն Կոնվենցիան ստորագրելու կամ դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ կիրառելու, միայն որոշակի դեպքերում կամ պայմաններում, 1-ին պարբերությունը՝ օժանդակ նյութերի, մասերի և նյութերի մասով, և 2-րդ պարբերությունը՝ օժանդակ նյութերի մասով:

### **Հոդված 6. Մատակարարումը, մատակարարման առաջարկը և կեղծիքների ապօրինի առևտուրը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իր ներպետական օրենսդրությամբ որպես հանցագործություն նախատեսելու համար բժշկական նշանակության կեղծ արտադրանքի, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների կանխամտածված մատակարարումը կամ մատակարարման առաջարկը՝ ներառյալ միջնորդությունը, ապօրինի առևտուրը, պահեստում պահելը, ներմուծելը և արտահանելը:

2. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական միությունը կարող է սույն Կոնվենցիան ստորագրելու կամ դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ կիրառելու, միայն որոշակի դեպքերում կամ պայմաններում, 1-ին պարբերությունը՝ օժանդակ նյութերի, մասերի և նյութերի մասով:

### **Հոդված 7. Փաստաթղթերի կեղծումը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իր ներպետական օրենսդրությամբ որպես հանցագործություն նախատեսելու համար կեղծ փաստաթղթերի կանխամտածված պատրաստումը կամ փաստաթղթերի հետ կեղծ գործողությունների իրականացումը:

2. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական միությունը կարող է սույն Կոնվենցիան ստորագրելու կամ դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է

վերապահում չկիրառելու կամ կիրառելու, միայն որոշակի դեպքերում կամ պայմաններում, 1-ին պարբերությունը՝ օժանդակ նյութերի, մասերի և նյութերի մասով:

### **Հոդված 8. Հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ որպես հանցագործություն նախատեսելու համար կանխամտածված կատարված հետևյալ գործողությունները՝ այնքանով, որքանով այդպիսի գործողությունները չեն կարգավորվում 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներով.

ա. արտադրությունը, մատակարարման նպատակով պահեստում պահելը, ներմուծումը, արտահանումը, մատակարարումը, մատակարարման առաջարկը կամ շուկայահանումը՝

i. դեղագործական այն արտադրանքի՝ առանց թույլտվության, եթե այդ թույլտվությունը պահանջվում է Կողմի ներպետական իրավունքով, կամ

ii. բժշկական սարքավորումների՝ առանց պահպանելու համապատասխանության պահանջները, եթե այդպիսի համապատասխանությունը պահանջվում է Կողմի ներպետական իրավունքով,

բ. բնօրինակ փաստաթղթերի օգտագործումը առևտրային նպատակներով, որը դուրս է դրանց նախատեսված նպատակներից՝ բժշկական արտադրանքի մատակարարման փուլերի շրջանակներում, ինչպես սահմանված է Կողմի ներպետական իրավունքով:

### **Հոդված 9. Հանցագործությանը օժանդակելը կամ դրան դրդելը, հանցագործության փորձը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ որպես հանցագործություն նախատեսելու համար սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված՝ հանցագործությանը կանխամտածված օժանդակելը, դրան դրդելը կամ հանցագործության փորձը:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ որպես հանցագործություն նախատեսելու համար սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված՝ կանխամտածված կատարված հանցագործության ցանկացած փորձ:

3. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական միությունը կարող է սույն Կոնվենցիան ստորագրելու կամ դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ կիրառելու, միայն որոշակի դեպքերում կամ պայմաններում, 1-ին պարբերությունը 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների նկատմամբ:

### **Հոդված 10. Իրավագործությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իրավագործություն սահմանելու համար սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված ցանկացած հանցագործության մասով, եթե այդ հանցագործությունը կատարվել է.

ա. իր տարածքում, կամ

բ. Կողմի ազգային դրոշի տակ նավարկող նավի վրա, կամ

գ. Կողմի ազգային օրենքներին համապատասխան գրանցված օդանավում, կամ

դ. Կողմի քաղաքացիներից մեկի կամ իր տարածքում առավելապես բնակվող անձի կողմից:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իրավագործություն սահմանելու համար սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված ցանկացած հանցագործության մասով, եթե հանցագործության տուժողն իր պետության քաղաքացիներից մեկն է կամ որևէ անձ, ով առավելապես բնակվում է իր տարածքում:

3. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ իրավագործություն սահմանելու համար սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված ցանկացած հանցագործության մասով, եթե հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը գտնվում է իր պետության տարածքում և չի կարող հանձնվել մյուս Կողմի տարածք իր քաղաքացիության հիմքով:

4. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական միությունը կարող է սույն Կոնվենցիան ստորագրելու կամ դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ կիրառելու, միայն որոշակի դեպքերում կամ պայմաններում, սույն հոդվածի 1-ին պարբերության «դ» ենթապարբերությամբ և 2-րդ պարբերությամբ սահմանված իրավագործության վերաբերյալ կանոնները:

5. Եթե մեկից ավելի Կողմեր իրավագործության մասով պահանջ են ներկայացնում սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված ենթադրյալ հանցագործության մասով, համապատասխան Կողմերը խորհրդակցում են՝ քրեական հետապնդում իրականացնելու համար ամենանպատակահարմար իրավագործությունը որոշելու նպատակով:

6. Չխախտելով միջազգային իրավունքի համընդհանուր նորմերը՝ սույն Կոնվենցիան որևէ կերպ չի բացառում որևէ Կողմի կողմից իր ներպետական իրավունքին համապատասխան իրականացվող որևէ քրեական իրավագործություն:

## **Հոդված 11. Կորպորատիվ պատասխանատվությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ հնարավոր լինի պատասխանատվության ենթարկել իրավաբանական անձանց սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների կատարման համար, երբ արարքը կատարվել է ֆիզիկական անձի կողմից, ի շահ այդ իրավաբանական անձանց, անկախ այն հանգամանքից՝ ֆիզիկական անձը գործել է անձամբ, թե հանդիսացել է իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ, որը տվյալ իրավաբանական անձի կազմում ղեկավար պաշտոն է զբաղեցրել հետևյալ հիմքերից մեկով.

- ա. ունեցել է իրավաբանական անձը ներկայացնելու լիազորություն,
- բ. ունեցել է իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավունք,
- գ. ունեցել է իրավաբանական անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նախատեսված դեպքերից բացի՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ հնարավոր լինի պատասխանատվության ենթարկել իրավաբանական անձին, երբ 1-ին պարբերության մեջ նշված ֆիզիկական անձանց կողմից իրականացվող վերահսկողության կամ ստուգման բացակայությունը հնարավոր է դարձրել սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործության կատարումը ֆիզիկական անձի կողմից, որը գործել է ի շահ այդ իրավաբանական անձի և վերջինիս կողմից ֆիզիկական անձին տրված լիազորությունների շրջանակներում:

3. Պահպանելով Կողմի իրավական սկզբունքները՝ իրավաբանական անձին կարելի է ենթարկել քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության:

4. Նման պատասխանատվությունը նախատեսվում է՝ չբացառելով հանցագործությունը կատարած ֆիզիկական անձի քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

## **Հոդված 12. Պատժամիջոցները և միջոցները**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունները պատժելի լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներով, ներառյալ քրեական և ոչ քրեական դրամական պատժամիջոցները, հաշվի առնելով դրանց ծանրությունը: Այդ պատժամիջոցները ներառում են սույն Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներին համապատասխան սահմանված, ֆիզիկական անձանց կողմից կանխամտածված կատարված հանցագործությունների մասով, ազատագրվում նախատեսող պատժամիջոցներ, որոնք կարող են հանգեցնել անձի հանձնման:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձինք ենթարկվեն համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների, ներառյալ քրեական և ոչ քրեական դրամական պատժամիջոցները, ինչպես նաև կարող է ձեռնարկել այլ միջոցներ, ինչպիսիք են՝

ա. ժամանակավորապես կամ մշտական հիմունքներով առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքից զրկելը,

բ. իրավական մարմինների վերահսկողության ներքո վերցնելը,

գ. դատական կարգով լուծարելը:

3. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝

ա. թույլատրելու համար հետևյալի առգրավումն ու բռնագրավումը.

i. բժշկական նշանակության արտադրանքը, ակտիվ նյութերը, օժանդակ նյութերը, մասերը, նյութերը և լրացուցիչ պարագաները, ինչպես նաև գույքը, փաստաթղթերը և այլ նյութական միջոցներ, որոնք օգտագործվել են սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործության կատարման նպատակով կամ նպաստել են դրա կատարմանը,

ii. հանցավոր ճանապարհով ստացված միջոցները կամ այդ միջոցների արժեքին համապատասխանող գույքը,

բ. թույլատրելու սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված՝ հանցագործության առարկա հանդիսացող՝ բժշկական նշանակության բռնագրավված արտադրանքի, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների ոչնչացումը,

գ. ձեռնարկելու այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապագա հանցագործությունները կանխելու նպատակով կատարված հանցագործություններին արձագանքելու համար:

## **Հոդված 13. Ծանրացուցիչ հանգամանքները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հետևյալ հանգամանքները, այնքանով, որքանով դրանք արդեն մաս չեն կազմում հանցագործության բաղկացուցիչ տարրերի, հնարավոր լինի, ներպետական իրավունքի համապատասխան դրույթների համաձայն, հաշվի առնել որպես ծանրացուցիչ



հանգամանքներ սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների մասով պատժամիջոցները որոշելիս.

ա. հանցագործությունը առաջացրել է տուժողի մահ կամ դրանով վնաս է հասցվել վերջինիս ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը,

բ. հանցագործությունը կատարվել է անձանց կողմից իրենց մասնագիտական լիազորությունների չարաշահմամբ,

գ. հանցագործությունը կատարվել է ֆիզիկական անձանց կողմից՝ չարաշահելով այն վստահությունը, որը դրվել է վերջիններիս վրա՝ որպես արտադրողի կամ մատակարարի,

դ. հանցագործություններ, որոնք ենթադրում են մատակարարում կամ մատակարարման առաջարկ, և որոնք կատարվել են զանգվածային տարածման միջոցներով, ինչպիսիք են տեղեկատվական համակարգերը, այդ թվում՝ համացանցը,

ե. հանցագործությունը կատարվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում,

զ. հանցագործություն կատարած անձը նախկինում դատապարտված է եղել նմանատիպ հանցագործություն կատարելու համար:

#### **Հոդված 14. Մեղադրական նախկին դատավճիռները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ պատժամիջոցները որոշելիս հնարավորություն ընձեռելու հաշվի առնել նույն բնույթի հանցագործությունների մասով մյուս Կողմի ընդունած վերջնական դատավճիռները:

#### **Մաս III. Հետաքննությունը, հետապնդումը և դատավարության իրավունքը**

#### **Հոդված 15. Դատավարության մեկնարկն ու ընթացքը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների հետաքննության կամ քրեական հետապնդման մեկնարկը չպայմանավորվի բողոքի առկայությամբ, և որպեսզի գործի ընթացքը շարունակվի անգամ այն դեպքում, երբ բողոքը հետ է վերցվել:

#### **Հոդված 16. Քրեական հետաքննությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ քրեական հետաքննության համար պատասխանատու անձինք, ստորաբաժանումները կամ ծառայությունները մասնագիտացած լինեն բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և նմանատիպ հանցագործությունների, այդ թվում՝ հանրային առողջության համար վտանգ ներկայացնող հանցագործությունների դեմ պայքարում, կամ որ այդ անձինք լինեն վերապատրաստված նշված նպատակներով, ներառյալ ֆինանսական հանցագործությունների հետաքննության ոլորտը: Նման ստորաբաժանումները և ծառայությունները պետք է ունենան համարժեք ռեսուրսներ:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ, իր ներպետական իրավունքի սկզբունքներին համաձայն, սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների նկատմամբ արդյունավետ քրեական հետաքննություն և հետապնդում ապահովելու համար՝ անհրաժեշտության դեպքում թույլատրելով ֆինանսական հանցագործությունների հետաքննության իրականացում կամ գաղտնի գործողություններ, վերահսկվող մատակարարումներ և այլ հատուկ հետաքննչական մեթոդներ:

#### **Մաս IV. Իրավասու մարմինների համագործակցությունը և տեղեկատվության**

## Ֆոխանակումը

### Հոդված 17. Համագործակցության և տեղեկատվության փոխանակման ազգային միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ բժշկական նշանակության արտադրանքի կեղծիքները և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ հանցագործությունները կանխելու և դրանց դեմ արդյունավետ պայքարելու նպատակով առողջապահության բնագավառում պետական մարմինների ներկայացուցիչները, մաքսային ծառայության, ոստիկանության և այլ իրավասու մարմինները տեղեկատվություն փոխանակեն և համագործակցեն՝ ներպետական իրավունքին համապատասխան:

2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել համագործակցությունը իր իրավասու մարմինների և առևտրային ու արդյունաբերական հատվածի միջև՝ բժշկական նշանակության արտադրանքի կեղծիքների և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ հանցագործությունների հետ կապված ռիսկերը կառավարելու նպատակով:

3. Պահպանելով անհատական տվյալների պաշտպանության պահանջները՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ստեղծելու կամ ամրապնդելու մեխանիզմներ հետևյալի համար.

ա. բժշկական նշանակության արտադրանքի կեղծիքները և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ հանցագործությունները կանխելու և դրանց դեմ պայքարելու նպատակով տեղեկատվության և տվյալների ստացում ու հավաքագրում, այդ թվում՝ կոնտակտային մարմինների միջոցով ազգային ու տեղական մակարդակներում և քաղաքացիական հասարակության ու մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ.

բ. առողջապահության, մաքսային ծառայության, ոստիկանության և այլ իրավասու մարմինների կողմից ձեռք բերված տեղեկատվության և տվյալների մատչելիության ապահովում՝ վերջիններիս միջև համագործակցություն ապահովելու նպատակով:

4. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ համագործակցության և տեղեկատվության փոխանակման համար պատասխանատու անձինք, ստորաբաժանումները կամ ծառայությունները վերապատրաստված լինեն այդ նպատակով: Նման ստորաբաժանումները և ծառայությունները պետք է ունենան համարժեք ռեսուրսներ:

## Մաս V. Կանխարգելիչ միջոցները

### Հոդված 18. Կանխարգելիչ միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ բժշկական նշանակության արտադրանքի որակի և անվտանգության պահանջերը սահմանելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ բժշկական նշանակության արտադրանքի անվտանգ բաշխումն ապահովելու համար:

3. Բժշկական նշանակության արտադրանքի, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների կեղծումը և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ հանցագործությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, ի թիվս այլ

հարցերի, հետևյալը.

ա. առողջապահության բնագավառի մասնագետների, մատակարարների, ոստիկանության և մաքսային ծառայության մարմինների, ինչպես նաև համապատասխան կարգավորիչ մարմինների վերապատրաստում,

բ. բժշկական նշանակության կեղծ արտադրանքի վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացման միջոցառումների կազմակերպմանը նպաստում,

գ. բժշկական նշանակության արտադրանքի, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների ապօրինի մատակարարման կանխում:

## **Մաս VI. Պաշտպանության միջոցները**

### **Հոդված 19. Տուժողների պաշտպանությունը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ տուժողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար, մասնավորապես՝

ա. ապահովելով, որ տուժած անձինք հնարավորություն ունենան ստանալու իրենց գործին վերաբերող և իրենց առողջության պաշտպանության համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն,

բ. աջակցելով տուժած անձանց ֆիզիկական, հոգեկան առողջության և սոցիալական վերականգնման հարցում,

գ. իր ներպետական իրավունքում ապահովելով տուժողի՝ հանցագործություն կատարողից փոխհատուցում ստանալու իրավունքը:

### **Հոդված 20. Տուժողների կարգավիճակը քրեական հետաքննության և դատավարության ընթացքում**

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ քրեական հետաքննության և դատավարության բոլոր փուլերում տուժողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար, մասնավորապես.

ա. վերջիններիս տեղեկացնելով իրենց իրավունքների և իրենց տնօրինության տակ գտնվող ծառայությունների, ինչպես նաև, բացառությամբ այն դեպքերի, երբ տուժողները հրաժարվում են ստանալ նշված տեղեկությունները, իրենց բողոքին տրված ընթացքի, գործի հնարավոր հարուցման, հետաքննության և դատավարության ընդհանուր ընթացքի, ինչպես նաև այս ամենում վերջիններիս դերի և գործի հետևանքների ու լուծման մասին,

բ. ներպետական իրավունքի դատավարական նորմերին համապատասխան՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով արտահայտելու իրենց դիրքորոշումը, ներկայացնելու ապացույցներ և ընտրելու իրենց կարծիքը, կարիքները և մտահոգությունը ներկայացնելու, անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով, և հաշվի առնված լինելու եղանակները,

գ. աջակցության համապատասխան ծառայություններ ցուցաբերելով վերջիններիս, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը լինեն պատշաճ կերպով ներկայացված և հաշվի առնված,

դ. արդյունավետ միջոցներ ձեռնարկելով տուժողների, վերջիններիս ընտանիքների և վկաների անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև վերջիններիս սպառնալիքներից և վրեժխնդրությունից զերծ պահելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տուժողները իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփման ընթացքում հնարավորություն ունենան ստանալու իրենց վերաբերող՝ դատական և վարչական վարույթի ընթացքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տուժած անձինք ստանան անվճար իրավաբանական օգնություն, երբ նրանց համար հնարավորություն է ստեղծվում քրեական

վարույթում հանդես գալու որպես կողմ:

4. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված և Կողմ հանդիսացող պետության տարածքում կատարված հանցագործությունից տուժածները, որոնց բնակության վայրը այդ Կողմի տարածքում չէ, հնարավորություն ունենան բողոք ներկայացնելու իրենց բնակության վայրի պետության իրավասու մարմիններ:

5. Յուրաքանչյուր Կողմ օրենսդրական և այլ միջոցներով նախատեսում է խմբերի, հիմնադրամների, միավորումների, պետական և հասարակական կազմակերպությունների հնարավորությունը, իր ազգային օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, քրեական դատավարության ընթացքում աջակցել և (կամ) օգնություն ցուցաբերել սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործություններից տուժած անձանց՝ ունենալով վերջիններիս համաձայնությունը:

## **Մաս VII. Միջազգային համագործակցությունը**

### **Հոդված 21. Քրեական գործերում միջազգային համագործակցությունը**

1. Կողմերը համագործակցում են միմյանց հետ, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան և միասնական ու փոխադարձության հիմքով ընդունված օրենսդրության և իրենց ներպետական իրավունքի հիման վրա միջազգային և տարածաշրջանային համապատասխան կիրառելի փաստաթղթերի և համաձայնեցված պայմանավորվածությունների համաձայն, սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների մասով իրականացվող հետաքննությունների և դատական վարույթների նպատակով, ներառյալ՝ առգրավման ու բռնագրավման մասով:

2. Կողմերը հնարավորինս սերտորեն համագործակցում են միմյանց հետ՝ սույն Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերում հանձնման և փոխադարձ իրավական օգնության մասին համապատասխան կիրառելի միջազգային, տարածաշրջանային և երկկողմ պայմանագրերի համաձայն:

3. Եթե Կողմերից մեկը, որը քրեական գործերում հանձնումը կամ փոխադարձ իրավական օգնությունը պայմանավորում է համապատասխան պայմանագրի առկայության պահանջով, ստանում է հարցում քրեական գործերում հանձնման և փոխադարձ իրավական օգնության համար մեկ այլ Կողմի կողմից, որի հետ ինքը չունի այդպիսի պայմանագիր, ապա առաջին Կողմը կարող է, գործելով միջազգային իրավունքի ներքո ստանձնած իր պարտավորություններին համապատասխան և պահպանելով հարցում ներկայացրած Կողմի օրենքով նախատեսված պայմանները, սույն Կոնվենցիան դիտարկել որպես իրավական հիմք Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործությունների մասով հանձնում իրականացնելու կամ փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերելու համար:

### **Հոդված 22. Կանխարգելման ուղղությամբ միջազգային համագործակցությունը և այլ վարչական միջոցները**

1. Կողմերը համագործակցում են տուժողներին պաշտպանելու և օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

2. Չխախտելով հաշվետվությունների ներկայացման ներպետական համակարգերը՝ Կողմերը նշանակում են ազգային կոնտակտային մարմին, որը պատասխանատու է տեղեկատվության փոխանցման ու ստացման հարցումների և

(կամ) բժշկական նշանակության արտադրանքի կեղծումների և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների դեմ պայքարի մասով համագործակցության համար:

### 3. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր

Կողմ բժշկական նշանակության արտադրանքի կեղծումների և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը ներառում է ի նպաստ երրորդ երկրների իրականացվող՝ զարգացման և աջակցության ծրագրերում:

## Մաս VIII. Հետագա վերահսկողություն իրականացնելու մեխանիզմը

### Հոդված 23. Կողմերի կոմիտեն

1. Կողմերի կոմիտեն կազմված է Կոնվենցիայի Կողմ հանդիսացող երկրների ներկայացուցիչներից:

2. Կողմերի կոմիտեի նիստերը հրավիրվում են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից: Կոմիտեի առաջին նիստը տեղի է ունենում մեկ տարվա ընթացքում՝ հաշված այն պահից, երբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 10-րդ ստորագրողի կողմից վավերացվելուց հետո: Հետագա նիստերը հրավիրվում են Կողմերի առնվազն մեկ երրորդի կամ գլխավոր քարտուղարի պահանջով:

3. Կողմերի կոմիտեն ընդունում է իր աշխատակարգը:

4. Իր գործառույթներն իրականացնելիս Կողմերի կոմիտեն աջակցություն է ստանում Եվրոպայի խորհրդի քարտուղարության կողմից:

5. Այն Պայմանավորվող կողմը, որը Եվրոպայի խորհրդի անդամ չէ, Նախարարների կոմիտեի սահմանած կարգով մասնակցում է Կողմերի կոմիտեի ֆինանսավորմանը այդ Կողմի հետ խորհրդակցելուց հետո:

### Հոդված 24. Այլ ներկայացուցիչներ

1. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Հանցագործությունների հարցերով զբաղվող Եվրոպական կոմիտեն (ՀԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մյուս միջկառավարական և գիտական համապատասխան կոմիտեները Կողմերի կոմիտեում յուրաքանչյուրը նշանակում է ներկայացուցիչ՝ բազմաուլորտային և բազմագիտակարգային մոտեցմանն աջակցելու նպատակով:

2. Նախարարների կոմիտեն կարող է դիմել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների՝ Կողմերի կոմիտեում ներկայացուցիչ նշանակելու առաջարկով, այդ Կողմերի հետ խորհրդակցելուց հետո:

3. Եվրոպայի խորհրդի համապատասխան կանոններով սահմանված ընթացակարգի համաձայն՝ միջազգային մարմինների ներկայացուցիչները կարող են դիտորդի կարգավիճակով ընդգրկվել Կողմերի կոմիտեում:

4. Եվրոպայի խորհրդի համապատասխան կանոններով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Կողմերի համապատասխան պաշտոնական մարմինների ներկայացուցիչները կարող են դիտորդի կարգավիճակով ընդգրկվել Կողմերի կոմիտեում:

5. Եվրոպայի խորհրդի համապատասխան կանոններով սահմանված ընթացակարգի համաձայն՝ քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, կարող են դիտորդի կարգավիճակով ընդգրկվել Կողմերի կոմիտեում:

6. Սույն հոդվածի 2-5-րդ պարբերությունների համաձայն ներկայացուցիչների նշանակման դեպքում պահպանվում է տարբեր ոլորտների և գիտակարգերի հավասարակշիռ ներկայացուցչությունը:

7. Սույն հոդվածի 1-5-րդ պարբերությունների համաձայն նշանակված ներկայացուցիչները Կողմերի կոմիտեի նիստերին մասնակցում են առանց ձայնի իրավունքի:

### **Հոդված 25. Կողմերի կոմիտեի գործառույթները**

1. Կողմերի կոմիտեն վերահսկում է սույն Կոնվենցիայի կիրարկումը: Կողմերի կոմիտեի աշխատակարգով սահմանվում է սույն Կոնվենցիայի կիրարկումը գնահատելու ընթացակարգը՝ կիրառելով բազմաօլորտային և բազմագիտակարգային մոտեցում:

2. Կողմերի կոմիտեն նաև դյուրացնում է տեղեկատվության, փորձի և արդյունավետ գործելակերպի հավաքագրման, վերլուծման և փոխանակման գործընթացը պետությունների միջև՝ բժշկական նշանակության արտադրանքի կեղծումը և հանրային առողջության համար սպառնալիք պարունակող նմանատիպ հանցագործությունները կանխելու և դրանց դեմ պայքարելու վերջիններիս կարողությունները բարելավելու նպատակով: Կոմիտեն կարող է օգտվել նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմինների և կոմիտեների փորձից:

3. Ավելին, անհրաժեշտության դեպքում Կողմերի կոմիտեն՝  
ա. նպաստում է սույն Կոնվենցիայի արդյունավետ կիրառմանն ու կիրարկմանը՝ ներառյալ սույն Կոնվենցիայի շրջանակներում խնդիրների և արված ցանկացած հայտարարության կամ վերապահման ազդեցությունների բացահայտումը,  
բ. ներկայացնում է կարծիք ցանկացած հարցի վերաբերյալ, որն առնչվում է սույն Կոնվենցիայի կիրառմանը, և դյուրացնում է կարևոր՝ իրավական, քաղաքական կամ տեխնոլոգիական զարգացումներին վերաբերող տեղեկատվության փոխանակումը,  
գ. Կողմերին ներկայացնում է կոնկրետ առաջարկություններ սույն Կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ:

4. Հանցագործությունների հարցերով զբաղվող եվրոպական կոմիտեն պարբերաբար տեղեկացվում է սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված աշխատանքների մասին:

## **Մաս IX. Առնչությունն այլ միջազգային փաստաթղթերին**

### **Հոդված 26. Առնչությունն այլ միջազգային փաստաթղթերին**

1. Սույն Կոնվենցիան չի ազդում այն միջազգային փաստաթղթերի դրույթներից բխող իրավունքների և պարտականությունների վրա, որոնց կողմ են հանդիսանում կամ կհանդիսանան սույն Կոնվենցիայի Կողմերը, և որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ դրույթներ:

2. Սույն Կոնվենցիայի Կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր, որոնք վերաբերում են Կոնվենցիայով կանոնակարգվող հարցերին՝ Կոնվենցիայով նախատեսված դրույթները լրացնելու կամ ամրապնդելու, ինչպես նաև դրանում ամրագրված սկզբունքների կիրառմանը նպաստելու նպատակով:

## Մաս X. Կոնվենցիայում փոփոխությունները

### Հոդված 27. Փոփոխությունները

1. Կողմերից մեկի ներկայացրած՝ սույն Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ ցանկացած առաջարկ ներկայացվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին և վերջինիս կողմից ուղարկվում է մյուս Կողմերին, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը կամ Եվրոպայի խորհրդում դիտորդի կարգավիճակ ունեն, Եվրոպական միությանը և ցանկացած այլ պետության, որին առաջարկվել է ստորագրել սույն Կոնվենցիան:

2. Կողմերից մեկի առաջարկած ցանկացած փոփոխություն ներկայացվում է Հանցագործությունների հարցերով զբաղվող Եվրոպական կոմիտե, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի՝ համապատասխան այլ միջկառավարական կամ գիտական կոմիտեներ, որոնք Կողմերի կոմիտեին եզրակացություն են ներկայացնում առաջարկված փոփոխության վերաբերյալ:

3. Նախարարների կոմիտեն, ուսումնասիրելով առաջարկված փոփոխությունը և Կողմերի կոմիտեի եզրակացությունը, կարող է ընդունել փոփոխությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան՝ Նախարարների կոմիտեի ընդունած ցանկացած փոփոխության տեքստ ներկայացվում է Կողմերին, որպեսզի վերջիններս այն ընդունեն:

5. Սույն հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո մեկ ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ բոլոր Կողմերը գլխավոր քարտուղարին տեղեկացրել են, որ իրենք ընդունել են այդ փոփոխությունը:

## Մաս XI. Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 28. Ստորագրելը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Եվրոպական միության և անդամ չհանդիսացող այն պետությունների համար, որոնք մասնակցել են վերջինիս մշակման աշխատանքներին կամ Եվրոպայի խորհրդում ունեն դիտորդի կարգավիճակ: Այն ստորագրման համար բաց է նաև Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած այլ պետության համար, որին Նախարարների կոմիտեն առաջարկել է այն ստորագրել: Անդամ չհանդիսացող պետության կողմից Կոնվենցիայի ստորագրման առաջարկի վերաբերյալ որոշումն ընդունվում է Եվրոպայի խորհրդի կանոնակարգի 20-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված ձայների մեծամասնությամբ և Նախարարների կոմիտեում քվեարկության իրավունք ունեցող Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների կողմից միաձայն տրված ձայնով: Նշված որոշումն ընդունվում է այն պետությունների/Եվրոպական միության միաձայն համաձայնությունն ստանալուց հետո, որոնք իրենց համաձայնությունն են տվել այն փաստին, որ սույն Կոնվենցիան պարտադիր է իրենց համար:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ հինգ ստորագրող պետություն, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի երեք անդամ պետություն, սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դրույթներին համապատասխան, իրենց համաձայնությունն են տալիս այն փաստին, որ սույն Կոնվենցիան պարտադիր է իրենց համար՝ նախորդ պարբերության դրույթներին համապատասխան:

4. Ցանկացած պետության կամ Եվրոպական միության համար, որը հետագայում իր համաձայնությունն է տալիս այն փաստին, որ սույն Կոնվենցիան պարտադիր լինի իր համար, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

### **Հոդված 29. Տարածքային կիրառությունը**

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական միությունը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ավելի ուշ ժամանակահատվածում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով ընդլայնել սույն Կոնվենցիայի կիրառությունը հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ, որի միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատվություն է կրում, կամ որոնց անունից ինքն իրավասու է պարտավորություններ ստանձնելու: Նման տարածքների համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վերը նշված ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Վերը նշված երկու պարբերությունների համաձայն արված ցանկացած հայտարարություն կարելի է այդ հայտարարության մեջ նշված տարածքների մասով հետ վերցնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալուց հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

### **Հոդված 30. Վերապահումները**

1. Սույն Կոնվենցիայի դրույթների մասով որևէ վերապահում չի թույլատրվում բացառությամբ այն վերապահումների, որոնք հստակ կերպով նախատեսված են:

2. Յուրաքանչյուր Կողմ, որը վերապահում է արել, ցանկացած պահի կարող է այն ամբողջությամբ կամ մասնակիորեն հետ վերցնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից:

### **Հոդված 31. Հաշտության համաձայնությունը**

Կողմերի կոմիտեն Հանցագործությունների հարցերով զբաղվող Եվրոպական կոմիտեի և Եվրոպայի խորհրդի այլ միջկառավարական և գիտական կոմիտեների հետ համատեղ կիստևի սույն Կոնվենցիայի կիրառմանը և անհրաժեշտության դեպքում կնպաստի Կոնվենցիայի կիրառմանն առնչվող բոլոր խնդիրների հաշտությամբ լուծմանը:

### **Հոդված 32. Կոնվենցիան չեղյալ հայտարարելը**



1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած պահի չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:

2. Այդպիսի չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի ստանալուց հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

### **Հոդված 33. Ծանուցելը**

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է Կողմերին, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը կամ Եվրոպայի խորհրդում ունեն դիտորդի կարգավիճակ, Եվրոպական միությանը և ցանկացած այլ պետության, որին առաջարկվել է ստորագրել սույն Կոնվենցիան՝ սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածին համապատասխան.

- ա) սույն Կոնվենցիան ստորագրելու ցանկացած դեպքի,
- բ) վավերացման, ընդունման կամ միանալու մասին որևէ փաստաթուղթ ի պահ հանձնելու,
- գ) 28-րդ հոդվածին համապատասխան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,
- դ) 27-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության և այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,
- ե) 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան կատարված ցանկացած վերապահման և 30-րդ հոդվածին համապատասխան վերապահումը հետ վերցնելու,
- զ) 32-րդ հոդվածին համապատասխան Կոնվենցիան չեղյալ հայտարարելու ցանկացած դեպքի,
- է) սույն Կոնվենցիային առնչվող ցանկացած ակտի, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Մոսկվայում 2011 թվականի հոկտեմբերի 28-ին, անգլերենով և ֆրանսերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարապես նույնական են, մեկ օրինակով, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը կամ Եվրոպայի խորհրդում ունեն դիտորդի կարգավիճակ, Եվրոպական միությանը և ցանկացած այլ պետության, որին առաջարկվել է ստորագրել սույն Կոնվենցիան:

*Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 1-ին*